# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌԻ ՄԱՐԶ
# ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Լոռու մարզի Գուգարք գյուղ, Հեռ. 5-24-76

N 28
*09 փետրվար 2018թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Նալբանդյան.

Ներկայացնում ենք Գուգարք համայնքի ղեկավարի 2018թվականի 14-19 որոշումները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Աշոտ Աշուղյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզի
Գուգարք համայնք
Հեռ. 5-24-76

02. 02. 2018

# ՈՐՈՇՈՒՄ N 14

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-031-0061-0231 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԱՌԿԱ ՆԵԼԼԻ ԳԱՌՆԻԿԻ ԴԱՐԲԻՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԵՎ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ (ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԿԱՆ N26122017-06-0033) ԵՎ ՆՐԱ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԿԱՌՈՒՑՈՂԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2006թ. N **912Ն***
որոշման դրույթներով՝

***Համայնքապետը որոշեց.***

Գուգարքի կադաստրային քարտեզի 06-031-0061-0231 ծածկագրում առկա և որպես Գուգարք համայնքի սեփականություն գրանցված ինքնակամ կառուցված ավտոտնակը և նրա զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողատարածքը ուղղակի վաճառքով վաճառել ավտոտնակը ինքնակամ կառուցողին՝ Նելլի Գառնիկի Դարբինյանին հետևյալ արժեքներով՝

1. Ավտոտնակ 23,2քմ x 1300դրամ = 30160 դրամ
2. Զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողատարածք-
   -29,47քմ x1242դրամ = 36602 դրամ
   Ընդամենը – 66762 դրամ:

Գուգարքի համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# ՈՐՈՇՈՒՄ N 15-Ն

07 փետրվարի 2018

## ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33 հոդվածի, հիմք ընդունելով Գուգարք համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 26 -Ն ՝ <<Գուգարք համայնքի 2018թվականի բյուջեն հաստատելու մասին>> որոշումը՝

որոշում եմ.

1. Հաստատել Գուգարք համայնքի 2018 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը:
2. Հաստատել համայնքային ենթակայության հիմնարկների 2018թվականի ծախսերի նախահաշիվները՝ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածների:

ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄ.ՂԵԿԱՎԱՐ Ա.ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 16

**06 փետրվարի 2018**

## ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 48 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 46 հոդվածի 1-ին մասի 5 կետը՝*

Փոխանցել ներքոհիշյալ ուսանողների ուսման վճարները՝

1. Այվազյան Աննա Հովիկի – 360000դր.
2. Սոլոմոնյան Գայանե Աշոտի – 185000դր.
3. Մանուչարյան Տաթևիկ Արտյոմի – 400000դր.:

ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզի
Գուգարք համայնք
Հեռ. 5-24-76

07.02.2018

# ՈՐՈՇՈՒՄ N 17

06-031-0045-0006 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*Հիմք ընդունելով քաղաքացի Օ. Ավետյանի դիմումը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 21.11.1991թ. թիվ 11 որոշումը, Ա/Չ Գասպար Վեքիլյանի կողմից կազմված հատակագիծը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510Ն օրենքի 7-րդ հոդվածի 1 կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387Ն որոշմամբ, ըստ օրենքի ժառանգության իրավունքի N218 վկայագրով.*

***Համայնքապետը որոշեց.***

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-031-0045-0006 ծածկագրի տակ գտնվող 0,21192հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1963թ. կառուցված 22,51քմ մակերեսով բնակելի տան, 1963թ. կառուցված 15,56 քմ մակերեսով բնակելի տան, 1988թ. կառուցված 63,26 քմ մակերեսով բնակելի տան, 1963թ. կառուցված 24,57քմ մակերեսով բնակելի տան, 1963թ. կառուցված 20,31քմ մակերեսով բնակելի տան, 1988թ. կառուցված 28,7քմ մակերեսով բնակելի տան, 1988թ. կառուցված 24,08 քմ մակերեսով բաց պատշգամբի նկատմամբ Օլյա Լադիմերի Ավետյանի (ծնվ. 1941թ.) և Քրիստինե Արամայիսի Ավետյանի (ծնվ. 1980թ.) բաժնային սեփականության իրավունքը, իսկ 2003թ. Կառուցված 3,0 քմ մակերեսով բնակելի տունը գրանցել որպես ինքնակամ կառուցված շինություն:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի հատկացված 0,07 հա հողամասն անհատույց, սեփականության իրավունքով վերահատկացնել, իսկ հատկացվածից ավելի զբաղեցրած 0,14192 հա հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Օլյա Լադիմերի Ավետյանի և Քրիստինե Արամայիսի Ավետյանի բաժնային սեփականության իրավունքը:
3. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
4. Հողամասի սահմանները որոշվում են որակավորման վկայական ստացած անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
5. Անշարժ գույքի փոստային հասցեն է՝ գ. Գուգարք 14 փողոց, տուն 29:
6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանումում:

Համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

07 02 2018թ.

# ՈՐՈՇՈՒՄ No - 18

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-031-0061-0007-001-5 ԾԱԾԿԱԳՐԻ, ԿԱՄՈ ԿԱՌԼԵՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387Ն որոշմամբ՝*

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՈՐՈՇԵՑ.

Գուգարքի կադաստրային քարտեզի 06-031-0061-0007-001-5 ծածկագրի, Կամո Կառլենի Հակոբյանին պատկանող բնակարանի համար հաստատել հետևյալ փոստային հասցեն՝
գ. Գուգարք 1 փողոց շենք 1 բնակարան 5

Գուգարքի համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N19

**09.02.2018**

ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 48 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝*

Գուգարքի ներքոհիշյալ բնակիչներին տալ դրամական օգնություն.

1. Հակոբյան Մելանյա – 65000դր.
2. Եղշատյան Գևորգ- 35000դր.
3. Բեգլարյան Անգին – 70000դր.
4. Կարինե Ջալալյան – 50000դր.
5. Ֆենյա Սիմոնյան - 50000դր.
6. Սուսաննա Գրիգորյան – 20000դր.
7. Սուսաննա Պողոսյան – 40000դր.
8. Քնարիկ Հակոբյան – 45000դր.
9. Աղասի Շողերյան – 60000դր.:

ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՇՈՒՂՅԱՆ